972 Անսահման է սերը Տիրոջ,

1. Անսահման է սերը Տիրոջ,
Ինձ ու քեզ Նա ներեց սիրով,
Մեզ սեր տվեց, մեզ կյանք տվեց,
Խաչի վրա մեր փրկությունը
գրվեց:
Փառք ենք ասում, հզոր Աստված
Հավիտյան կյանք է մեզ տրված:
Հիսո՛ւս Արքա, փառք Քեզ
այնքա՛ն,
Մենք Սուրբ Հոգով ու սիրով
առջևդ գանք:

Ալելուիա՛ Քեզ, Տե՛ր,
Ալելուիա՛ Քեզ,
Ամենազոր ու Ամենակալ ես Դու:
Անսահման սեր ես,
Մեր անուշ Տերն ես,
Մեզ մի՛ թողնիր, օրհնի՛ր մեզ,
ողորմի՛ր:

2. Երկնքում Տեր ունենք անգին,
Տիրոջմով սիրենք ամենքին,
Երջանիկ ենք Հիսուսի հետ,
Որ գտել ենք մենք լույսի նոր
արահետ:
Փառք ենք ասում, հզոր Աստված,
Հավիտյան կյանք է մեզ տրված:
Հիսո՛ւս Արքա, փառք Քեզ
այնքա՛ն,
Մենք Սուրբ Հոգով ու սիրով
առջևդ գանք:

3. Երկնքից Տերն է մեզ նայում,
Պահում է մեզ ու պահպանում
Չարի նետից, չարի սրից,
Հանում է մեզ Նա խավարից ու
մթից:
Փառք ենք ասում, հզոր Աստված
Հավիտյան կյանք է մեզ տրված:
Հիսո՛ւս Արքա, փառք Քեզ
այնքա՛ն,
Մենք Սուրբ Հոգով ու սիրով
առջևդ գանք: